600.0254.20.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2018 թվականի №254Ա
քաղ. Երևան

«ԳՈՌՍՈՒ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2009 թվականի սեպտեմբերի 30-ի «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №618Ա որոշմամբ «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0656 թույլտվությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ,

գ) Օրենքի 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն Օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,075 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար: Մինչև 2018 թվականի հունվարի 2-ը գործող խմբագրությամբ նույն մասի համաձայն՝ նախատեսվել է գանձել տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

դ) Ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի №ԱԲ-2580Հ, 2018 թվականի հունվարի 10-ի №ԱԲ-029Հ և ապրիլի 4-ի №ԱԲ-665Հ գրություններով,

ե) Ընկերության կողմից Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհա-

ճախականության օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2018 թվականի մայիսի 24-ին Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2018 թվականի մայիսի 24-ի №ԱԲ-11612 գրությամբ,

զ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

է) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման պարտավորությունը, որը 2018 թվականի հունիսի 20-ի դրությամբ կազմում է 200 663 (երկու հարյուր հազար վեց հարյուր վաթսուներեք) դրամ, որից 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 50 663 (հիսուն հազար վեց հարյուր վաթսուներեք) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և՝

հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել №0656 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով մինչև 2018 թվականի հունիսի 20-ը հաշվարկված 200 663 (երկու հարյուր հազար վեց հարյուր վաթսուներեք) դրամ պարտքը, որից 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 50 663 (հիսուն հազար վեց հարյուր վաթսուներեք) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
20 հունիսի 2018թ.